ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09.11.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ, Ա. Մուրադյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն ԱՁ Վարդան Մկրտչյանը և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն համապատասխանաբար 7415 և 423000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը (հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքով սահմանված շեմը) և ԱՁ Վարդան Մկրտչյանի ներկայացրած հայտը 26-րդ, 70-րդ և 75-րդ չափաբաժինների մասով (հարկային պարտավորությունները գերազանցում են նշված չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը), իսկ «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ԱՁ Վարդան Մկրտչյանի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող (ԱՁ Վարդան Մկրտչյանի հարկային պարտավորությունները չեն գերազանցում 4-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը և Օրենքով սահմանված շեմը):

Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս մասնակիցներին մերժել ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքերով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի բանավոր առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը www.eauction.armeps.am կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջիններիս համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը կգնահատի անբավարար: Արդյունքում «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և ԱՁ Վարդան Մկրտչյանի ներկայացրած հայտը 26-րդ, 70-րդ և 75-րդ չափաբաժինների մասով կմերժվի:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ԱՁ Վարդան Մկրտչյանի 4-րդ չափաբաժնի մասով որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/2» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել հրավերով սահմանված կարգով անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Լ. Խաչատրյան
Գնահատող	Գ. Ռատյան
Գնահատող	Ա. Մուրադյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան